ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի հոկտեմբերի 31-ի ժամը 14:00-ի նիստի
N 3 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Աննա Ռուբենի Ղարսյանի՝** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Ա.Ռ.Ղարսյանը 2020 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնում որպես «Հայոց լեզու և հայ գրականություն» դասընթացի ավագ դասախոս. նախ՝ 01.09.2020 - 24.08.2021՝ ասիստենտ (1,0 դրույք), այնուհետև՝ 25.08.2021 - 31.08.2023՝ դասախոս (1,0 դրույք), իսկ 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ավագ դասախոս (1,0 դրույք): Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Ա.Ռ.Ղարսյանը ծնվել է 1987 թվականի հոկտեմբերի 25-ին Շիրակի մարզի գյուղ Աշոցքում՝ իրավաբանի և մանկավարժի ընտանիքում: 1994-2003 թթ. սովորել է Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ դպրոցում, 2003-2004 թթ.՝ Երևանի «Քվանտ» վարժարանում: 2004 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետ անվճար հիմունքով և ավարտել է 2008 թվականին գերազանց առաջադիմությամբ: 2008-2010 թթ. սովորել է նույն ֆակուլտետի մագիստրատուրայում «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մասնագիտացմամբ, ավարտել է գերազանց առաջադիմությամբ: 2011 թվականին ընդունվել է ասպիրանտուրա (հեռակա ուսուցման բաժին) Ժ.02.01՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ: Ուսումնառությանը զուգահեռ՝ Ա.Ռ.Ղարսյանը 2008 թվականից մինչև 2015 թվականը, աշխատել է «Քվանտ» վարժարանում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Վարել է «Գրականություն» և

«Հայոց լեզու» օլիմպիական խմբակները, որոնք գրանցել են հանրապետական փուլում լուրջ հաջողություններ: 2016 թվականից մինչև 2020 թվականը աշխատել է Դ.Դեմիրճյանի անվան հ. 27 հիմնական դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Դպրոցում ձեռք է բերել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների հետ աշխատելու փորձ: 2020 թվականից մինչև 2022 թվականը համագործակցել է Սփյուռքի գկխավոր հանձնակատարի գրասենյակի հետ «իԳործ» ծրագրի շրջանակում՝ սփյուռքահայ լսարանին դասավանդելով հայերեն: Մասնակցել է մասնագիտական, մեթոդաբանական, SS և այլ ոլորտներին վերաբերող մի շարք դասընթացների և վերապատրաստումների:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

2017 թվականին Ա.Ռ.Ղարսյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Արդի հայերենի իրավաբանական տերմինները» թեմայով և ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 12 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 5 է (1 մենագրություն, 1 դասախոսություններ, 3 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում):

Լեզուների ամբիոնում աշխատելու ընթացքում Ա.Ռ.Ղարսյանը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, որոնցից հատկանշական է Ե.Չարենցին նվիրված ցերեկույթը և էսսեների համահամալսարանական գիտական մրցույթը: Նա իրեն դրսևորել է որպես նպատակասլաց, աշխատասեր, բանիմաց, բարեխիղճ մասնագետ, վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հարգանքը:

Լեզուների ամբիոնը միաձայն (կողմ՝ 25, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Ա.Ռ.Ղարսյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Աննա Ռուբենի Ղարսյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի

քվեարկությանը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 55, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 55-ը, քվեարկությանը մասնակցել են 55-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 55, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Աննա Ռուբենի Ղարսլյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Աննա Ռուբենի Ղարսլյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Բանասիրական գիտություններ»** բնագավառի **Ժ.02.01՝ «Հայոց լեզու»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. հոկտեմբերի 31
Երևան